ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/47

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.05.2018թ. թիվ 03/26-3/8411-18 գրությամբ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02597503) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1585 գրության հիման վրա, 11.05.2018թ. «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1585 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում 79-րդ չափաբաժնի մասով «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 05.04.2018թ. սահմանված կարգով «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագիրը չի ներկայացրել: Քանի որ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն պահանջվող փաստաթղթերը չէր ներկայացրել, գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանծման հարցման ընթացակարգի 79-րդ չափաբաժինը հայտարարվեց չկայացած:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Ռոբերտ Զադոյանը:

3. «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն 16.05.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի՝ 79-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

«Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 09.04.2018թ. ժամը 11:09-ին Ընկերության armeps էլեկտրոնային համակարգում գրանցված corporate@eurobaza.am էլեկտրոնային հասցեից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին ուղարկել է պահանջված որակավորման բոլոր փաստաթղթերը:

Ի հավաստում «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն պատրաստակամություն է հայտնում ՍՑ-ԷՍ-2018/47 պաշտոնական ընթացակարգով հրավիրվող նիստի ժամանակ բացել Ընկերության corporate@eurobaza.am էլեկտրոնային հասցեն և ապացուցել, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ուղարկել է պահանջված որակավորման բոլոր փաստաթղթերը:

Սակայն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2018թ. ժամը 12:00 նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը չի ներկայացվել:

Քանի որ, «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն պահանջվող փաստաթղթերը չէր ներկայացրել, գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 79-րդ չափաբաժինը հայտարարվեց չկայացած:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնա¬ժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մաս¬նակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, գտնում ենք, որ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում, 09.04.2018թ. գնահատող հանձնաժողովի համապատասխան էլեկտրոնային հասցեին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը: Սակայն Ընկերության կամքից անկախ, անհասկանալի տեխնիկական պատճառներով, գնահատող հանձնաժողովը, ըստ երևույթի, չի ստացել Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստթղթերը և մերժել «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ի հայտը:

Փաստացիորեն տվյալ դեպքում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ ինչպես վկայում են ներկայացված ապացույցները, տվյալ դեպքում առկա է «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու փաստը:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանզի Ընկերությունը, ինչպես արդեն նշվել է, կատարել է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուին ներկայացնելու պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա»ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, ուստի խնդրում ենք «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Զավեն Սարգսյանը և լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը, Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2018թ. թիվ 03/26-3/8411-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության

05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1585 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 21.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 և 12.04.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, Պատվիրատուի կողմից 05.04.2018թ. «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցումը, «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից 16.05.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ համակարգչային սարքեր, սարքավորումներ և օժանդակ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:
- N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և

ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 21.03.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 5 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է ընթացակարգի 79-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 05.04.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին ուղարկվել է հետևյալ ծանուցումը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով հանձնաժողովի որոշմամբ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ընթացակարգի 79-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները պարտավոր են Հրավերով սահմանված կարգով և ժամկետում v.sahakyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

Հանձնաժողովը 21.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը չի ներկայացրել:

Նույն արձանագրության, նույն կետով Հանձնաժողովը որոշել է «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 09.04.2018թ. ժամը 11:09-ին

Ընկերության www.armeps.am էլեկտրոնային համակարգում գրանցված corporate@eurobaza.am էլեկտրոնային հասցեից Հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին ուղարկել է պահանջված որակավորման բոլոր փաստաթղթերը: Ընկերության տնօրենը Բողոքներ քննող անձին նիստի ժամանակ համակարգչի միջոցով բացեց corporate@eurobaza.am էլեկտրոնային հասցեն և ցույց տվեց, որ սահմանված ժամկետում ուղարկել է պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերը՝ նշված v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի

միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 09.04.2018թ. էլեկտրոնային փոստով ուղարկել է Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը՝ Հրավերում նշված v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ն կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պարտավորությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2018թ. թիվ 03/26-3/8411-18 գրությամբ «Յունիվերսալ Պրոջեքտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02597503) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ